

## Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկ

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ,

**i** - տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը սպառողի կրեդիտավորման **ընդհանուր ծախսն** է, արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու **այլ վճարումները**, որոնք սպառողը պարտավոր է վճարել կրեդիտի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

**A** - սպառողին տրամադրվող կրեդիտի սկզբնական գումարն է:

**n** - սպառողի կողմից կրեդիտի մարմանն ուղղված (կրեդիտի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) **այլ վճարումների** գումարներ) վճարի (ներառյալ կրեդիտի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համարն է: Ընդ որում, մեկ օրվա ընթացքում կրեդիտի մայր գումարի, տոկոսագումարների և(կամ) **այլ վճարումների** կատարումը համարվում է մեկ վճարում:

**N**-կրեդիտի մարմանը (կրեդիտի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) **այլ վճարումների** գումարներ) ուղղված վերջին վճարի համարն է (ներառյալ նաև կրեդիտի ստացման պահին կատարվող վճարը), որից հետո սպառողի կողմից կրեդիտային պայմանագրով ստանձնած պարտավորությունները համարվում են մարված:

**K<sub>n</sub>** -սպառողի կողմից մինչև կրեդիտի ստացման պահը, կրեդիտի ստացման պահին և (կամ) կրեդիտի գործողության ընթացքում կատարված հերթական՝ **n**-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) **այլ վճարումների** գումարներ):

**D<sub>n</sub>** -այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել կրեդիտի ստացման օրից մինչև կրեդիտի գումարի հերթական՝ **n**-րդ մարման օրը ներառյալ: